

րին որդւոյն՝ Թիֆլիսի Կորկի խանին կողմանէ երկու հոգի եկան, Սեւանէն դառնալէն տարի մը ետքը, եւ անոնց հետ Թիֆլիս փախաւ. 20 օր քաբուչիներու քով մնաց եւ անկէ Մոլտավիոյ ճամբով Պոլիս անցաւ: 1796 Մայիս 13ին (հ. տ.) կը գրէ Կ. Պոլսէն, թէ Էջմիածնէն Պոլիս հասեր է տարւոյ մը մէջ մեծ նեղութեամբ: Ի Կ. Պոլիս շատ տարիներ կաթուղիկեայ քով ապրեցաւ իբրեւ միսիոնար: 1802 Մայիս 6 թուականաւ Կ. Պոլսոյ Աւստրիական տեսպանը B. de Testa ձեռագիր վկայագիր մը տուած է՝ թէ Սիստովի խաղաղութեան 12դ յօդուածին համեմատ՝ Սարգիս Ա. Պաղտասարեան թէքիրտաղցի աւստրիական պաշտպանեալներու ցանկը գրուած է: 2 Յունուար 1804ին Կ. Պոլսոյ Մոնս. ֆոնդոն նուիրակը խոստովանալ լսելու իրաւունք տուած է իրեն, ինչպէս նաեւ երրուսաղէմ երթալու համար 4 Հոկտ. 1805 թուակիր յանձնարարական մը: 1822ին Ղալաթիա «ի վանս ճէզվիթաց», կը բնակէր, մինչեւ որ 1828ին ուրիշ կաթուղիկէից հետ Պոլսէն աքսորուեցաւ, Հռոմ հասաւ Սեպտ.ի մէջ, ուր Բրոբականտա զինք սիրով ընդունեցաւ, եւ իր շէնքին մէջ առանձին բնակարան տուաւ «ընդ հովանեաւ երից սրբոց մոգուց», ուրկէ է 1833ին գրած մէկնամակը, ուր նաեւ վախճանեցաւ 1834ին, 83 տարեկան, որուն 1882 Ապրիլին Ս. Քահանայապետէն տնօրինում տրուած էր Պատարագի մէջ բերնուց չգիտցածները զանց առնելու, աչքի տկարութեանը պատճառաւ: